

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

«Գիտական առաջադեմ տեխնոլոգիաների օգտագործում և համագործակցություն հանուն ռեսուրսների համալիր պահպանության» (ԳԱՏՕ) ծրագրի և Առատաշեն համայնքի համատեղ ուժերով:

Պիլոտային այս ծրագրի նպատակն էր վերականգնել Առատաշեն համայնքի ջրամատակարարման ցանցը և համայնքում ապահովել հուսալի որակյալ շուրջօրյա ջրամատակարարում:

Ծրագրի շրջանակներում իրականացվեցին հետևյալ աշխատանքները.

- Ցանցի վերանախագծում և վերակառուցում՝ օգտագործելով բարձրորակ պոլիէթիլենային խողովակներ
- Նոր ջրասույզ պոմպի և կառավարման վահանակների տեղադրում
- Նոր քլորակայանի նախագծում
- Բաժանորդների ներտնտեսային խողովակագծերի փոխարինում և ջրաչափերի տեղադրում:

Առաջարկվող լուծումները թույլ տվեցին համայնքում նախկին 5 ժամվա փոխարեն ապահովել շուրջօրյա ջրամատակարարում, բարելավել խմելու ջրի որակը և կրճատել հոսքակորուստները: Ծրագրի իրականացման շնորհիվ տարեկան խնայվում է մոտ 557000 մ3 ջուր և 204 ՄՎտժ հոսանք:

Ծրագրի ընդհանուր բյուջեն՝ 130,371 ԱՄՆ դոլար, ԳԱՏՕ ծրագրի ներդրումը՝ 87,455 ԱՄՆ դոլար, համայնքի ներդրումը՝ 42,916 ԱՄՆ դոլար: Սկսվել է՝ 2018 թ. հուլիսին, ավարտվել՝ 2019 թ. հունիսին:

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

«Գիտական առաջադեմ տեխնոլոգիաների օգտագործում և համագործակցություն հանուն ռեսուրսների համալիր պահպանության» (ԳԱՏՕ) ծրագրի և Եղեգնուտ համայնքի համատեղ ուժերով:

Պիլոտային ծրագրի նպատակն է վերականգնել Առատաշեն համայնքի ջրամատակարարման ցանցը և համայնքում ապահովել հուսալի որակյալ շուրջօրյա ջրամատակարարում: Ծրագրով նախատեսվում են ենթակառուցվածքների վերականգնման հետևյալ աշխատանքները.

- Ցանցի վերանախագծում և վերակառուցում՝ օգտագործելով բարձրորակ պոլիէթիլենային խողովակներ
- Նոր ջրասույզ պոմպի և կառավարման վահանակների տեղադրում
- Նոր քլորակայանի նախագծում
- Բաժանորդների ներտնտեսային խողովակագծերի փոխարինում և ջրաչափերի տեղադրում:

Առաջարկվող լուծումները թույլ կտան համայնքում ապահովել 3 ժամվա փոխարեն շուրջօրյա ջրամատակարարում, բարելավել խմելու ջրի որակը և կրճատել ցանցի խափանումները:

Ծրագրի ընդհանուր բյուջեն՝ 120,809 ԱՄՆ դոլար, ԳԱՏՕ ծրագրի ներդրումը՝ 79,777 ԱՄՆ դոլար, համայնքի ներդրումը՝ 41,032 ԱՄՆ դոլար: Ծրագիրը սկսվել է 2018 թ. հուլիսին, դեռ ընթացքում է: